ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԵՆ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՍԻՄՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ*

Ստեփան Ծաղիկյան, Արթուր Անտոնյան

Բանալի բառեր՝ օրենսգիրք, հանցագործություն, սիմուլյացիա, անդամախեղում, մարմնական վնասվածք, պատասխանատվություն, իրավական կարգավորում:

Իրեն մարմնական վնասվածք պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու համար պատասխանատվությունը նախատեսվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 327 հ, 2 մ, 1 կետով: Նշված եզրույթները ՀՀ օրենսդիրը օգտագործում է նաև 327³ հոդվածի վերնագրում հետևյալ վերտառությամբ՝ «Այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից անդամախեղվելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով այլընտրանքային աշխատանքային ծառայությունից խուսափելը»: Ընդ որում, հոդվածի դիսպոզիցիայում օրենսդիրը հստակեցնելով հավասարության նշան է դրել «իրեն որևէ վնասվածք պատճառել» և «անդամախեղություն» հասկացությունների միջև: Վերը նշված հասկացությունները հայրենական քրեական օրենսգրքում օգտագործվում են նաև զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների 363 հոդվածի վերնագրում, ինչպես և նորմի դիսպոզիցիայում:

Հարկ է նշել, որ միաժամանակ կիրառվող «անդամախեղել» տերմինը առաջին անգամ, որպես հանցագործության հիմնական բաղադրիչ, օրենսդրական մակարդակով կիրառվել է միայն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 1958թ. դեկտեմբերի 25-ի «Զինվորական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին» օրենքում, որի 13-րդ հոդվածը կոչվում էր «անդամախեղելու կամ այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը»և պարունակում էր անդամախեղելու կամ այլ եղանակով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու համար պատասխանատվության քրեաիրավական նորմ [1]:

Մինչդեռ նմանատիպ հասկացություններ օգտագործվել են դեռևս 1922 թ. ՌՍԽՍՀ քրեական օրենսգրքում, ըստ որի՝ բացի զորամասի կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելուց, զինծառայողների կողմից զինվորական ծառայություն կրելուց ապօրինի խուսափելը կարող էր կատարվել նաև առողջությանը վնաս պատճառելու կամ այլ խաբեության միջոցով: Այս արարքի համար պատասխանատվությունը նախատեսվում էր 206-րդ հոդվածով, որը սկզբնական խմբագրվել էր հետևյալ կերպ.

«Զինծառայողի կողմից զինվորական ծառայություն կրելուց կամ մարտական գործողություններին մասնակցելուց խուսափելը՝ իրեն վնաս պատճառելու կամ այլ խաբեության միջոցով (խլության, համրության, կուրության, հոգեկան հիվանդության սիմուլյացիա և այլն), այդ արարքի կատարմանը դրդելը և դրան նպաստելը պատժվում է 204 -րդ հոդվածով նախատեսված պատիժներով» [10]:

---

* Հոդվածն ընդունվել է 12.02.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ի.գ.թ., պրոֆեսոր Զ. Թադևոսյանը: 21.02.20:

Այսպիսով, քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածը նոր խմբագրությամբ արդեն շարադրվել է հետևյալ կերպ. «Զինծառայողի կողմից զինվորական ծառայություն կրելուց կամ մարտական գործողություններին մասնակցելուց խուսափելը՝ իրեն վնաս պատճառելու կամ այլ խաբեության միջոցով (խլության, համրության, կուրության, հոգեկան հիվանդության սիմուլյացիա և այլն), այդ արարքի կատարմանը դրդելը և դրան նպաստելը պատժվում են մինչև երեք տարի ժամկետով ազատազրկմամբ՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց գույքի բռնագրավման» [10, էջ 193] :

Այն ժամանակվա քրեաիրավական գիտությունում առկա էր հետևյալ պատկերացումը զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու կազմի մասին՝ անդամախեղելու կամ այլ եղանակով.տվյալ հանցագործության սուբյեկտ էր ճանաչվում միայն զինծառայողը, իսկ դրդիչ կամ հանցակից կարող էին լինել ինչպես զինծառայողները, այնպես էլ մասնավոր քաղաքացիները:

Օբյեկտիվ կողմից քննվող հանցակազմը կարող էր արտահայտվել ոչ միայն զինծառայությունից լրիվ ազատման, այլև ծառայությունից քիչ թե շատ երկարատև խուսափելու մեջ և համարվում էր ավարտված այն պահից, երբ զինծառայողը սահմանված կարգով ազատվում էր զինվորական ծառայությունից: Կարճաժամկետ ազատումը (շարային պարապմունքներից, վերակարգերից և այլն) առաջացնում էր պատիժ կարգապահական կանոնադրությամբ:

Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելը կարող էր կատարվել անձի կողմից իրեն որևէ վնաս պատճառելու կամ այլ խաբեության միջոցով [3, էջ 121]:

Վնասելու տակ հասկացվում էր զինծառայողներին մարմնական որևէ վնասվածք պատճառելը՝ մատների կտրումը, վերքերի վնասումը, առողջության խանգարումներ առաջացնող նյութերի ընդունումը և այլն:

Ըստ 1922-ի ՌՍԽՍՀ ՔՕ-ի՝ մեկ այլ խաբեություն էր բացառապես ֆիզիկական թերությունների սիմուլյացիան՝ խլություն, համրություն, կուրություն, հոգեկան հիվանդություն և այլն: Նշված ցանկը սպառիչ բնույթ չի կրել,սակայն միայն ֆիզիկական և հոգեկան թերությունների թվարկումը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ օրենսդիրը նկատի է ունեցել բացառապես զինվորական ծառայության պարտականություններից ազատվելու իրավունք տվող տարբեր հիվանդությունների սիմուլյացիան: Հետևաբար, հրամանատարության հիվանդության մասին կեղծ փաստաթղթի ներկայացմամբ զինվորական ծառայությունից խուսափելու հարցը, թեև հնարավոր է դիտարկել ՌՍԽՍՀ 206 հոդվածի տեսանկյունից, բայց միայն քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի կիրառմամբ, համաձայն որի՝ քրեական օրենսգրքում հանցագործությունների առանձին տեսակների, պատիժների կամ հասարակական պաշտպանության միջոցների վերաբերյալ ուղղակի ցուցումների բացակայության դեպքում կարող են կիրառվել քրեական օրենսգրքի՝ ըստ կարևորության և տեսակի նման հանցանք նախատեսող հոդվածների՝ Օրենսգրքի ընդհանուր մասի կանոնների պահպանմամբ:

ԽՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի 2-րդ նստաշրջանի 1924թ. հոկտեմբերի 31-ի նիստի որոշմամբ հաստատվեց «զինվորական հանցագործությունների մասին դրույթը», որը ներառում էր 19 հոդված, որոնցից 9-ը պատասխանատվություն էր սահմանում անդամախեղելու կամ այլ եղանակով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու համար և իր մեջ ներառում էր հետևյալ դրույթները՝«Զինծառայողի կողմից զինվորական ծառայություն կրելուց կամ մարտական գործողություններին մասնակցելուց խուսափելը՝ իրեն վնաս պատճառելու կամ սիմուլյացիայի միջոցով (խլության, համրության, կուրության, հոգեկան հիվանդության և այլն) կամ փաստաթղթերի կեղծման ճանապարհով, այդ արարքի կատարմանը դրդելը և դրան նպաստելը:

Զինվորական հանցագործությունների մասին նոր դրույթում անդամախեղելու

կամ այլ եղանակով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելուն նվիրված էր երկու հոդված՝ հ. 12 և 13: 12-րդ հոդվածը բաղկացած էր երեք կետից և խմբագրված էր հետևյալ կերպ.

«Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելը՝ իրեն որևէ վնաս պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի միջոցով կամ փաստաթղթերի կեղծման կամ այլ խաբեության միջոցով հանգեցնում է ազատազրկման մինչև երեք տարի ժամկետով՝ խիստ մեկուսացմամբ կամ առանց դրա»(կետ «ա»):

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. օգոստոսի 7-ի որոշմամբ 1927 թ. - ի զինվորական հանցագործությունների մասին դրույթի 12-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կրելուց խուսափելը՝ իրեն որևէ վնասվածք պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի, փաստաթղթերի կեղծման կամ այլ խաբեության միջոցով պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով (կետ «ա») [7, էջ 347]:

Անդամախեղելու կամ այլ միջոցով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու, ինչպես և զինվորական ծառայության դեմ ուղղված մյուս հանցագործությունների մասին հայրենական օրենսդրության հետագա զարգացումը կապված է, ինչպես վերը նշվել է, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից «զինվորական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին» 1958թ. դեկտեմբերի 25-ի օրենքի ընդունման հետ:

Այս օրենքը կարևոր է նրանով, որ առաջին անգամ զինվորական ծառայության դեմ հանցագործությունների համար «անդամախեղել» եզրույթը հայտնվել է օրենսդրական մակարդակում և ներառված է 13-րդ հոդվածի (անդամախեղելու կամ այլ միջոցով զինվորական ծառայությունից խուսափելը) անվանման մեջ և դիսպոզիցիայի տեքստում, որը սահմանել է պատասխանատվություն հետևյալ արարքների կատարման համար.

«Զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կրելուց խուսափելը՝ իրեն որևէ վնաս պատճառելու (անդամախեղել) կամ հիվանդության սիմուլյացիայի, փաստաթղթերի կեղծման կամ այլ խաբեության միջոցով, ինչպես նաև զինվորական ծառայության պարտականությունները կրելուց հրաժարվելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով (կետ«ա»): Նույն արարքները, որոնք կատարվել են պատերազմական ժամանակներում կամ մարտական պայմաններում, պատժվում են մահապատժով կամ ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով (կետ«բ»)» [1]:

1958թ. զինվորական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին օրենքի 13-րդ հոդվածը ներառվել է ՌՍԽՍՀ Քրեական օրենսգրքի 1960 թ.հ.249-ում, և դրանցում ներառված անդամախեղելու կամ այլ եղանակով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու հասկացությունը գրեթե ոչնչով չի տարբերվում 1926 թ. ՌՍԽՍՀ Քրեական օրենսգրքի 193[12]-րդ հոդվածում շարադրվածից, սակայն ունեցել է իր առանձնահատկությունները[4, էջ 201]:

Անդամախեղելու կամ այլ միջոցով խուսափելը կարող էր կրել ժամանակավոր կամ մշտական բնույթ, ինչը կայանում էր ընդհանրապես զինվորական ծառայություն կրելուց կամ զինվորական պարտականությունների առանձին տեսակների կատարումից (օրինակ՝ պահակային ծառայություն կրելուց) ազատման մեջ և համարվում էր ավարտված անձի՝ զինվորական ծառայության պարտականությունները կրելուց փաստացի խուսափելու կամ հրաժարվելու պահից:

Քննվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում էր ուղղակի դիտավորությամբ, ինչպես նաև զինվորական ծառայության պարտականությունները կրելուց մշտական կամ ժամանակավոր, լրիվ կամ մասնակի խուսափելու նպատակաուղղվա-

ծությամբ:

1960թ. ՌՍԽՍՀ Քրեական օրենսգրքի 249-րդ հոդվածի վերանայված խմբագրությունը գոյություն է ունեցել ընդհուպ մինչև 1997 թ., երբ նրան փոխարինելու է եկել այժմ արդեն Ռուսաստանի Դաշնության նոր օրենսգիրքը: Հարկ է նաև նշել, որ սույն օրենսգրքի ավելի քան երեսունհինգամյա գոյության ընթացքում դրա 249-րդ հոդվածում ոչ մի փոփոխություն չի կատարվել:

Հայկական ԽՍՀ 1961թ.Քրեական օրենսգրքի իսկական զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելը 75 հ. 2 մ. ևս օգտագործվել են «իրեն մարմնական վնասվածք պատճառելու միջոցով կամ հիվանդության սիմուլյացիայի» արտահայտությունները, իսկ «զինապարտի խուսափելը վարժական կամ ստուգողական հավաքներից» 214-րդ հոդվածում, որպես արարքը ծանրացնող հանգամանք, օգտագործվում են «իրեն որևէ վնասվածք (անդամախեղում)» եզրույթները: Ավելին, «Զինվորական հանցագործություններ» գլխի257 հ. ձևակերպվել է «Անդամախեղման միջոցով կամ այլ եղանակով զինվորական ծառայությունից խաբելը»վերնագրով:

Նշված դիսպոզիցիայից ակնհայտ է, որ օրենսդիրը նույնացնում է «իրեն որևէ վնասվածք պատճառել» և «անդամախեղում» հասկացությունները:

1996թ. հունիսի 13-ին Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի կողմից ընդունվել է ՌԴ Քրեական օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 1997թ.հունվարի 1-ից, որտեղ քննարկվող հանցագործությանն է վերաբերում 339-րդ հոդվածը՝ «Հիվանդության սիմուլյացիայի կամ այլ եղանակներով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելը». վերջինս զետեղված է ՌԴ Քրեական օրենսգրքի 33-րդ գլխում՝ «Զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ» շարքում: Այս հոդվածը բաղկացած է երկու մասից և որպես պատժելի արարք՝ սահմանում է հետևյալ գործողությունները.

1. Զինծառայողի կողմից հիվանդության սիմուլյացիայի կամ իրեն որևէ վնաս պատճառելու (անդամախեղելու) կամ փաստաթղթերի կեղծման կամ այլ խաբեության միջոցով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելը պատժվում է մինչև մեկ տարի ժամկետով զինվորական ծառայությունից սահմանափակումով կամ կալանքով՝ մինչև վեց ամիս ժամկետով կամ կարգապահական գումարտակում պահելով՝ մինչև մեկ տարի ժամկետով (1-ին մաս):

2. 2-րդ մասի համաձայն՝ հանրորեն վտանգավոր են ճանաչվել նույն արարքները, որոնք կատարվել են զինվորական ծառայության պարտականությունների կատարումից լրիվ ազատվելու նպատակով, որոնք պատժվում են ազատազրկմամբ՝ մինչև յոթ տարի ժամկետով[3]:

Գիտական գրականության մեջ բավականին լայնածավալ ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում «հիվանդության սիմուլյացիա» եզրույթը: Սույն խնդրի վերաբերյալ ուսումնասիրությունը վկայում է, որ նշված եզրույթն ունի իմաստով շատ մոտ, բայց միևնույն ժամանակ տարբերվող սահմանումներ[6,8,9]:

Ռուսական գրականության մեջ, ըստ Ինոգամովա-Խեգայի սահմանման, «Հիվանդության սիմուլյացիա» նշանակում է զինծառայողի կողմից իրեն որևէ հիվանդագին վիճակի կամ ֆիզիկական արատի վերագրում կամ իրականում իր մոտ առկա հիվանդության հատկանիշների գիտակցաբար չափազանցում[7]:

Հատկանշական է քննարկվող եզրույթի վերաբերյալ ՌԴ Գերագույն դատարանի նախագահ Վ.Մ. Լեբեդևի խմբագրությամբ համապատասխան մեկնաբանությունը. «Հիվանդության սիմուլյացիան կայանում է նրանում, որ զինծառայողը իրեն է վերագրում հիվանդություններ, ֆիզիկական, հոգեկան թերություններ, որոնցով իրականում չի տառապում կամ գիտակցաբար չափազանցում է իր մոտ առկա հիվանդությունները զինծառայության պարտականությունների կատարումից խուսափելու նպատակով» [5]:

Համեմատելով վերը նշված տարածում ստացած երկու սահմանումները՝ հե-

տաքրքրություն է առաջացնում առաջին մեջբերված սահմանման մեջ «հիվանդագին վիճակ» ձևակերպումը, որի տակ կարելի է հասկանալ ոչ թե կոնկրետ անձի հիվանդությունը, այլ անձի «ոչ առողջ», «հիվանդության հակված վիճակ»: Նման մոտեցումը էական նշանակություն կարող է ունենալ սույն արարքի ավարտված կամ չավարտված հանցագործության որակման հարցերում:

Բավականին հետաքրքիր է երկրորդ սահմանման մեջ ոչ միայն հիվանդությունների, այլև հենց հիվանդագին վիճակների ֆիզիկական, ինչպես նաև հոգեկան թերությունները և հստակեցված նպատակները:

Հաշվի առնելով վերը նշված մոտեցումները՝ գտնում ենք, որ ինչպես ՌԴ, այնպես էլ ՀՀ Քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել ոչ միայն հիվանդության սիմուլյացիա, այլև «հիվանդության, հիվանդագին վիճակի, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան թերությունների սիմուլյացիա» շարադրանքը, որը բովանդակային առումով կընդգրկի նաև նշված երևույթների գիտակցական չափազանցումը:

Ամփոփելով հիվանդության սիմուլյացիայի, իրեն վնաս պատճառելու (անդամախեղելու) կամ այլ եղանակով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու համար պատասխանատվության մասին օրենսդրության կայացման և զարգացման պատմական ակնարկը՝ կարելի է եզրակացնել, որ տվյալ կազմը վաղուց հայտնի է հայկական և ռուսական քրեական իրավունքին և նրանց համար նոր չէ:

ՀՀ Քրեական օրենսգրքի 327³, 363 հ., ՌԴ քրեական օրենսգրքի ուսումնասիրվող 339 հոդվածը ունեն օրենսդրական փոփոխության կարիք օբյեկտիվ կողմի իրականացման միջոցի՝ «հիվանդության սիմուլյացիայի» ձևակերպման հստակեցմամբ, մասնավորապես հետևյալ բովանդակությամբ.«հիվանդության, հիվանդագին վիճակի, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան թերությունների սիմուլյացիա» [2]:

Այսպիսով, Հայաստանի և Ռուսաստանի Քրեական օրենսգրքերի համեմատական վերլուծությունը, որը պատասխանատվություն է նախատեսում հիվանդության սիմուլյացիայի կամ այլ եղանակով զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու համար, մի կողմից վկայում է նշված քրեական օրենսգրքերի հաջորդականության մասին, իսկ մյուս կողմից բացահայտում է սոցիալ-քաղաքական պայմանները, որոնք անհրաժեշտ են համապատասխան ժամանակահատվածում քրեական օրենսդրության կատարելագործման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ Քրեական օրենսգիրք՝ ընդունված 07.03.1961 թ., էջ 62:
2. ՀՀ Քրեական օրենսգիրք, ՀՀ Պաշտոնական Տեղեկագիր. 18.04.2003, ՀՕ-528-Ն. Փոփոխությունները և լրացումները՝05.02.2019, ՀՕ-3-Ն., էջ 197, 221:
3. Уголовный Кодекс Российской Федерации. М.,1996, стр. 357.
4. УК РСФСР ред. 1926 г. с постатейно-систематизированными материалами / Под ред. С.С. Аскарханова. М.: НКЮ СССР, 1927.
5. «Комментарий к Уголовному Кодексу Российской Федерации».// под ред. Скуратова Ю.И., Лебедева В.М. (автор – Малков В.П.) // М.: «Норма». 2001, стр. 475.
6. Քրեական իրավունք. Հատուկ մաս, Ղազինյան Գ.Ս., Երևան, 2004.
7. «Российское уголовное право: в 2т. Т.2. Особенная часть».// под ред. Иногамова-Хегай Л.В., Комиссарова В.С., Рарога А.И.// // М., 2012, стр.389:
8. Аветисян С.С. Воинские преступления: Теория и практика. Ер. 2001.
9. Ավետիսյան Ս.Ս., Զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններ.

Գիտագործնական մեկնաբանություններ, Երևան, 2012:
10. Захаров Н.С. Сборник документов по истории уголовного законодательства СССР и РСФСР (1953-1991 гг.). Казань: Казанский ун-т, 1992, стр. 191.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Իրեն մարմնական վնասվածք պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի եղանակով զինվորական ծառայությունից խուսափելու համար պատասխանատվության իրավական կարգավորումը Հայաստանի քրեական օրենսգրքով

Ստեփան Ծաղիկյան, Արթուր Անտոնյան

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ Քրեական օրենսգրքում հիվանդության սիմուլյացիա, իրեն վնաս պատճառելը, անդամախեղություն հասկացությունների առանձնահատկություններին՝ նկատի ունենալով, որ հայրենական օրենսդրության մեջ նշված եզրույթների էությունը և բովանդակությունը ներկայացված չեն: Ուստի, խորհրդային և հետխորհրդային օրենսդրության և տեսական նյութերի ուսումնասիրության ու վերլուծության արդյունքում փորձ է արվել լրացնել այդ հասկացությունների վերաբերյալ գոյություն ունեցող բացերը:

РЕЗЮМЕ

Правовое регулирование ответственности за уклонение от военной службы путем причинения телесных повреждений или симуляции болезни по уголовному кодексу Армении

Степан Цагикян, Артур Антонян

Ключевые слова: кодекс, преступление, симуляция, ампутация, телесные повреждения, ответственность, правовое регулирование.

Настоящая статья посвящена особенностям понятий «симуляция», «членовредительство», причинение себе вреда, установленных в Уголовном кодексе Республики Армения, но не содержащих пояснений сути исследуемых понятий.

Следовательно, авторы посредством глубокого изучения и анализа советского и постсоветского уголовного законодательства, а также теоретических материалов, подходов и тенденций в определении указанных понятий, пытаются восполнить пробелы в понимании содержания этих терминов.

SUMMARY

Legal regulation of liability for evading military service by causing bodily injury or feigning illness under the criminal code of Armenia

Stepan Tsaghikyan, Artur Antonyan

Keywords: code, crime, simulation, amputation, bodily injury, liability, legal regulation.

This article is devoted to the simulation of the disease in the RA Criminal code, causing harm to it, and features of the concepts of paralysis, given that the essence and content of the terms specified in the domestic legislation are not presented: Therefore, as a result of studying and analyzing the Soviet and post-Soviet legislation and theoretical materials, an attempt was made to fill in the existing gaps in these concepts.